ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ VII, № 3, 1954 Биол. и сельхоз. науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ-ՀԻԳԻԵՆԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ

ՍՄԿՊ-ի 19 րդ համագումարը խնդիր դրեց մեծ թափով զարգացնել հիգիենան՝ պրոֆիլակտիկ բժշկությունը։

Մեր Միության մեջ կիրառվող հիգիենիկ լայն միջոցառումները նպատակ ունեն կանխել հիվանդությունների առաջացումն ու տարածումը, պահպանել մեր ամենաթանկագին կապիտալի՝ սովետական մարդու առողջությունն ու աշխատունակությունը։

Բժիշկ-հիգիենիստը իր պատվավոր տեղն է գրավել սովետական բժշկության առաջապահում, ամեն օր լայնացնելով իր գործունեության ոլորտը։

Այդ ամենը որոշակի պահանջ է առաջադրում բարձրացնել բժիշկ-հիգիենիստի պատրաստման որակը, ստեղծել նոր ու լավ դասագրքեր և ձեռնարկներ, որոնք օժանդակեն հիգիենիստ կադրերի պատրաստման և որակավորման գործին։

Վերջերս լույս տեսած պրոֆ. Լ. Ա. Հարությունյանի «Սանիտարական-հիգիենիկ հետազոտությունների համառոտ ձեռնարկ»[1] վերնագիրը կրող աշխատությունը ուշագրավ երևույթ է հայերեն լեզվով հիգիենիկ գրականության առպարեզում։

20 տպագրական մամուլ ծավալ ունեցող այդ աշխատության մեջ հեղինակը նպատակ է ունեցել բժիշկների և ուսանողների համար ստեղծել սանիտարական-հիգիենիկ հետազոտությունների հիմնական հարցերն ընդգրկող ձեռնարկ։

«Սանիտարական-էպիդեմիոլոգիական կայանների մեծ ցանցի առկայությունը ռեսպուբլիկայում,— գրում է հեղինակը,—մեր առջև հրամայական պահանջ է դնում սանիտարական աշխատողին տալ մի այնպիսի գործնական ձեռնարկ, որպեսզի իր աշխատանքի ընթացքում նա կարողանա հենվել ոչ միայն սոսկ հետազոտման նյութերի վրա, այլև, օգտվելով լարորատոր մեթոդներից, կարողանա իր եզրակացություններն անել պատճառաբանված օբյեկտիվ տվյալների վրա»։

Ինչպես ցույց է տալիս շարադրման ամբողջ ընթացքը, հեղինակին հաջողվել է իրագործել իր առջև դրված խնդիրը։

Ձեռնարկի սկզբի մասում քննարկվում է օդի հետազոտության հիմնական հարցերը։ Ապա տրված է հողի, շենքերի սան-հիգիենիկ, ջրի, սննդի հետազոտությունները։

Մանկական հիմնարկների հետազոտությանը նվիրված բաժնում հեղինակը կանգ է առնում դպրոցի տեղամասի ընտրության, դպրոցական շենքի, դասարանի կահավորման և դպրոցների հետազոտության վրա, ապա շարադրում երեխաների ֆիզիկական զարգացման հետազոտությունը։

Գրքի վերջում տրված է հաղուստի հետազոտությունը և մի քանի սննդային միջավայրերի պատրաստումը։

Պրոֆ. Լ. Ա. Հարությունյանի աշխատությունը հիգիենայի վերաբերյալ հայերեն լեզվով հրատարակված առաջին դիտական ձեռնարկն է։ Հենց այդ առումով էլ ողջունելի քայլ է։

Հեղինակը ընդգրկել է հիգիենայի մի շարք հիմնական ճյուղերի (ընդհանուր, կոմունալ, սննդի, պրոֆեսիոնալ և դպրոցական հիգիենաների) հետազոտության հիմնական հարցերը։

Ձեռնարկում բերված հետազոտության եղանակները արտացոլում են հայրենական հիգիենիկ գիտության պահանջները։ Նյութը շարադրված է պարզ և հասկանալի լեզվով։ Հե-

---

[1] Պրոֆ. Լ. Ա. Հարությունյան, *Սանիտարական-հիգիենիկ հետազոտությունների ձեռնարկ, Երևան, Հայպետհրատ, 1953։*

տաղտուության բուն մեթոդին անցնելուց առաջ հեղինակը համառոտակի տեղեկություններ է տալիս հետազոտության առարկա հանդիսացող հարցերի վերաբերյալ։ Այսպես, օրինակ, օդի հետազոտության մեթոդներին անցնելուց առաջ հեղինակը կանգ է առնում մթնոլորտային օդի կազմության ու հատկությունների և օդի նկատմամբ առաջադրվող սանիտարական-հիգիենիկ պահանջների վրա։

Գրքում բերված 50-ից ավելի աղյուսակները և 40-ից ավելի նկարները զգալի չափով օժանդակում են հետազոտվող հարցերը ճիշտ ըմբռնելու և ստույգ հաշվարկներ կատարելու գործին։

Գրքի հիմնական արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը հետազոտության մեթոդը նկարագրելու հետ մեկտեղ, տալիս է նաև այդ հետազոտության նշանակության անալիզը և արդյունքի գնահատականը։ Այդ հանգամանքը արժեքավոր է հետազոտվող խնդրի վերաբերյալ գիտականորեն պատճառաբանված եզրակացություն անելու համար։

Սակայն, այդ արժեքավոր մեթոդը հեղինակը չի պահպանել աշխատության բոլոր գլուխներում, մասնավորապես սննդի և սննդամթերքների հետազոտությանը նվիրված բաժնում։ Հեղինակը բավարարվել է շարադրելով տվյալ սննդամթերքին առաջադրվող հիմնական պահանջները, այնինչ ցանկալի կլիներ, որպեսզի քննության առնվեր յուրաքանչյուր հետազոտության արդյունքների գնահատականը։

Այս կամ այն հետազոտության նկարագրության վերջում լավ կլիներ նշել, թե հետազոտվող նյութը որ դեպքում անօգտագործելի է։ Որոշ դեպքերում այդ արված է։ Այսպես, օրինակ, ալյուրի մեջ այրացող սնկիկի որոշման ժամանակ նշված է, «այս սնկով վարակված ալյուրը սննդի մեջ չի թույլատրվում» (էջ 281)։ Նույն էջում ալյուրի մեջ թմբեցնող որոմի որոշմանը նվիրված մասում, նշելով վերջինիս թունավոր պարունակությունը, հեղինակը ոչինչ չի ասում այն մասին, թե դրանով վարակված ալյուրը արդյոք սննդի մեջ թույլատրվում է, թե՞ ոչ։

Որոշ դեպքերում հեղինակը չի զործածում այն հայերեն տերմինները, որոնք արդեն քաղաքացիության իրավունք են ստացել։ Այսպես, օրինակ, 71-րդ էջում կարդում ենք՝ հիպոթերմիա, հիպոտոնիա, 81-րդ էջում՝ կերոսինի լամպ, 83-րդ էջում՝ կամերա, 92-րդ էջում՝ էքսկրեմենտներ, 111—114 էջերում՝ հելմինթներ։

Չնայած վերոհիշյալ մանր թերություններին, պրոֆ. Լ. Ա. Հարությունյանի «Սանիտարական-հիգիենիկ հետազոտությունների համառոտ ձեռնարկը» խրախուսելի գործ է։

Դրախոսվող գիրքը արժեքավոր ձեռնարկ է բժիշկների և բժշկական ինստիտուտի ուսանողների համար և ողջունելի քայլ հայերեն լեզվով հիգիենիկ գիտական գրականության ստեղծման ասպարեզում։

Ստացվել է 17—XII—1953։ Ա. Ա. ԼԱԼԱՅԱՆ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ